ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՆԵՂՈՑԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МАРЗ ЛОРИ
СЕЛЬСКИЙ МУНИЦИПАЛИТЕТ НЕГОЦА
Հայաստան 1711, փ.1/19, հեռ.՝ /099/ 39 69 90, էլ.փոստ՝ neghots.lori@mta.gov.am

N 195

<<15>> 09 2017թ.

ՀՀ Լոռու մարզպետ
պարոն Ա.Նալբանդյանին

Հարգելի պրն Նալբանդյան.

Ձեզ եմ ներկայացնում տեղեկատվություն Նեղոց համայնքի ավագանու սույն թվականի սեպտեմբերի 09-ի թիվ 24-Ա որոշման վերաբերյալ տեղեկատվություն:

Առդիր՝ 1/մեկ/ թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ԱՆԹԱՆԵՍՅԱՆ

15.09.2017թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՆԵՂՈՑԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

«08»սեպտեմբեր 2017 թ.

# N 24-Ա ՈՐՈՇՈՒՄ

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0,04271ՀԱ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0,02386ՀԱ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Նեղոց համայնքի ավագանու քննարկմանը դրվեց համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0.002հա այլ հողատեսք , 0.04071հա արոտավայր և ՀՀ պետական սեփականություն հանդիսացող անտառային նշանակության 0.01193հա անտառ , 0,01193հա թփուտ նպատակային նշանակությունը էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիայի /էներգետիկայի գործառնական նշանակության/ փոփոխման և հետագայում ուղղակի վաճառքի կարգով օտարելու վերաբերյալ ՝ Նեղոց համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունիսի 12-ի N 599–Ն որոշման պահանջները ՝,,Էլեկտրակառավարման հուսալիության,, ծրագրի շրջանակներում իրականացվող «Նոյեմբերյան» և «Լալվար» 110 կՎ ԷՀՕԳ փոխարինում ծրագրի շրջանակներում հենարանների տեղակայման համար հատկացված , ՀՀ Լոռու մարզի Նեղոց գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող, գյուղատնտեսական նշանակության 0.002հա այլ հողատեսք , 0.04071հա արոտավայր և ՀՀ պետական սեփականություն հանդիսացող անտառային նշանակության 0.01193հա անտառ , 0,01193հա թփուտ նպատակային նշանակության հողամասերը փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա էլեկտրահաղորդման օդային գծի 6 հենասյուն կառուցելու համար:

Դիմել ՀՀ հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովին վերը նշված հարցը քննարկելու համար:

2. Համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների փոփոխության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացության դեպքում , Նեղոց համայնքի վարչական սահմաններում գտնվող 06-080-0507-0003 ծածկագրի 0,002հա այլ հողատեսքը, 06-080-0116-0177, 06-080-0116-0180, 06-080-0116-0179 ծածկագրերի 0.04071հա արոտավայրը և ՀՀ պետական սեփականություն հանդիսացող անտառային նշանակության 06-080-0116-0178 ծածկագրի 0,01193հա թփուտ, 06-080-0300-0002 ծածկագրի 0,01193 հա անտառ նպատակային

նշանակության հողատարածքները փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա հետագայում, հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի , 2-րդ կետի համաձայն ուղղակի վաճառքի կարգով օտարել ,,Բարձրավոլտ էլեկտրացանցեր,, փակ բաժնետիրական ընկերությանը , մեկ քառակուսի մետրը հարյուր քառասունչորս /144/ ՀՀ դրամ արժեքով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով «Նոյեմբերյան» և «Լալվար» 110 կՎ ԷՀՕԳ փոխարինում ծրագրի շրջանակներում էլեկտրահաղորդման օդային գծի / 6 հենասյուների/ կառուցման և սպասարկման համար

3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Նեղոց համայնքի ղեկավարին ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ / 3 / | Դեմ/0 / | Ձեռնպահ/ 0 / |
|---|---|---|---|
| 1.Բաղրամյան Ռոզա | [signature] | | |
| 2.Բեգջանյան Ալեն | [signature] | | |
| 3.Բեժանյան Արման | [signature] | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ԱՆԹԱՆԵՍՅԱՆ

08.09.2017թ.